

## ՏԻԳՐԱՆ ՉՅՈՒԿՅՈՒՐՅԱՆԸ ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏ

### ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Ինչպես մեր գրողներից շատերը, Տիգրան Չյուկուրյանը (1884—1915) նույնպես իր գրական գործունեության ընթացքում լրջորեն զբաղվել է գրականության և արվեստի հարցերով, որոնց առաջադրման ու լուսաբանման ընթացքում դրսևորել է բարձր գաղափարայնություն և սկզբունքայնություն: Որքան էլ զարմանալի լինի, Չյուկուրյանը գրական գործունեությունը սկսել է գրաքննադատական ու արվեստագիտական հոդվածներով, որոնք ջերմ արձագանք են գտել ժամանակակիցների շրջանում: Դատելով այդ հոդվածներից, դժվար չէ նկատել, թե որքան լայն էր հեղինակի տեսադաշտը և ինչքան խորը նրա դիտողությունները: Կերպարվեստ, երաժշտություն, թատրոն, գրականություն, ահա այն բնագավառները, որոնց նկատմամբ մշտական հետաքրքրություն է ցուցաբերել Չյուկուրյանը, արտահայտելով խորիմաստ մտքեր: Դա վերաբերում է, իհարկե, առաջին հերթին նրա գրաքննադատական հոդվածներին:

Որպես գրական քննադատ Չյուկուրյանը եղել է ընթացիկ գրական կյանքի ակտիվ մասնակից և իր ելույթներով արձագանքել է գրական շարժմանը, նպաստել նրա առաջընթացին: Նա հանդես է եկել գրախոսություններով, բանախոսություններով և նույնիսկ ծավալուն ուսումնասիրությամբ, որոնք արժեքավոր ավանդ են դարասկզբի հայ քննադատական մտքի զարգացման մեջ: Առանձնապես հետաքրքրական են նրա գրախոսությունները, որոնցում նա պաշտպանում ու խրախուսում էր շնորհալի ուժերին և արդարամիտ խրատությամբ քննադատում թույլ ու անարվեստ գործերը: Այդ տեսակետից ուշագրավ են Չյուկուրյանի վաղ շրջանի գրախոսություններից երկուսը, որոնցից մեկը նվիրված է Արտ. Հարությունյանի «Երկունք» ժողովածուի, մյուսը՝ Մեծարենցի բանաստեղծությունների առաջին գրքույկի («Միածան») քննությանը: Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում քննադատը հանդես է բերել անաչառություն և աշխատել է հասկանալ տվյալ բանաստեղծին, բացահայտել նրա ստեղծագործության էությունը և ըստ այդմ գնահատել այն:

Նոսաքը մասնավորելով «Երկունք» ժողովածուի նկատմամբ, պետք է ասել, որ Չյուկուրյանը հենց սկզբից չի թաքցնում իր վերաբերմունքը և խրատորեն քննադատում է այն որպես «տհաս արտագրությունների» մի հավաքածո՝ զուրկ գաղափարական ու գեղարվեստական ներդաշնակությունից: Նրան ամենից առաջ զայրացրել է այդ գրքի առաջաբանը («Ընթերցողին»), որը շնչում է գրական սնապարծությամբ: «Բանաստեղծը,—գրել է Չյուկուրյանը,—վարպետի ինքնավստահությամբ կը խոսի տափակ, նույնիսկ քիչ մը շատ տափակ լեզվով...»<sup>1</sup>: Նա իրավացիորեն ավելորդ է համարում բանաստեղծությունների այդ փոքրիկ գրքույկի համար երկու էջանոց առաջաբանը, որը հակասական մտքերի շփոթ է: Այսպես, հեղինակն առաջին էջում հայտարարում է. «Բանաստեղծությանց այս պզտիկ հատորը մասնավոր ծրագրի մը համաձայն պատրաստված երկասիրություն մը չէ», իսկ հաջորդ էջում ընդգծում, թե «Երկունքը» տրամաբանական կապ մըն է լիվաժ ֆեառին ու նոր ֆեառին միջև»<sup>2</sup>: Եթե իսկապես նոր ժողովածուն տրամաբանական կապ ունի նախորդ ժողովածուների հետ, ասում է քննադատը, «ուրեմն ծրագիր մը գոյություն ունենալն չի դադրիր և այդ ծրագրին ամբողջականության մեկ

<sup>1</sup> «Մասիս», 1906, № 15, էջ 228.

<sup>2</sup> Արտ. Հարությունյան, Երկունք, Կ. Պոլիս, 1906, էջ 6, 7:

մասն է Երկուները: Անցնելով ժողովածուի բովանդակությանը՝ Չյուկյուրյանը նկատում է, որ այն լի է ինքնեզոքությամբ. «Ժայռեծայր իր եսին փառավորումն է, ինքզինքը, իր զգացողությունները, իր հոգիին ստացած ձրգտումները մեզի ծանոթացնելու ահագին մաքմաջ մը ունի...»<sup>3</sup>: Հարությունյանի ժողովածուի մի այլ թերությունը քննադատը համարում է այն, որ նրանում նկատելի է «հոգեկան կես մը կեղծ տառապանքներուն անվերջ շրջաժաներու շարք»<sup>4</sup>: Այլ կերպ ասած՝ բանաստեղծին պակասում է զգացմունքների անկեղծությունը, որի հետևանքով նրա ոտանավորները չունեն վարակիչ ուժ: «Կեղծ տառապանքներն» ու բռնազրոսիկ զեղումները, որոնք ահագին տեղ են բռնում «Երկուներ» ժողովածուում, չեն կարող հուզել ընթերցողին և առավել ևս՝ հաճույք պատճառել նրան:

Անդրադառնալով Հարությունյանի բանաստեղծությունների արվեստին՝ Չյուկյուրյանը շեշտում է, որ «մեծագույն մասին մեջ անհեղաշնականություն կա...»<sup>5</sup>: Դա արտահայտվում է «խորթ, կոկորդային, դժվար արտասանելի» բառակապակցություններով, որոնք այնքան ակնբախ են, որ քննադատը նույնիսկ հարկ չի համարում որևէ օրինակ բերել: Ի վերջո, Հարությունյանի բանաստեղծությունների աչքի ընկնող թերություններից է ինքնատիպության պակասը: Չյուկյուրյանը ցույց է տալիս, որ բանաստեղծը տակավին խարխափում է ազդեցությունների ոլորտում. «...տեսակ մը նրբացած և naturaliste դուրյանականություն կա բանաստեղծին գործին մեջ, թեև ազդված կ'երեւի Պոտլենե, Վերլեն և տեքստաններեն, որոնց սակայն ներշնչումին բարձրության չէ կրցած հասնիլ...»<sup>6</sup>: Դրա հետևանքով էլ բանաստեղծը, քննադատի կարծիքով, «կը տատանի ու դեռ չէ գտած իր ուղղությունը, որ հարկավ, դինքը իր գրական հակումներուն ինքնուրույն ուղիին մեջ պիտի դնեն»<sup>7</sup>: Իրականության սեփական զգացողություն և բանաստեղծական ձայնի թարմություն,— ահա թե ի՞նչ է պակասում «Երկուներ» հեղինակին, որը թեև զուրկ չէ ստեղծագործական ընդունակությունից, բայց կարիք ունի լարված աշխատանքով հաղթահարելու նկատված թերությունները և տիրապետելու խոսքի արվեստին:

Ուշադիր հետևելով իր ժամանակի գրական կյանքին՝ Չյուկյուրյանը ձգտում էր իր քննադատական դիտողություններով նպաստել այդ կյանքի զարգացմանը: Դրա համար որքան նա խիստ էր թույլ ու անմշակ գործերի նկատմամբ, նույնքան հոգատար էր դեպի խոստումնալի ուժերը և պաշտպանում ու խրախուսում էր նրանց գրական սկզբնաքայլերը: Այդ առումով բնորոշ է այն ջերմ ու խանդավառ վերաբերմունքը, որ ցուցաբերեց Չյուկյուրյանը Մ. Մեծարենցի առաջին գրքի՝ «Միածանի» հանդեպ: Նա սիրով ընդունեց բանաստեղծությունների այդ գրքույկը և աշխատեց գնահատել երիտասարդ հեղինակի բերած թարմ շունչն ու ինքնատիպությունը: «Բանաստեղծության պզտիկ հատոր մը կուզա երևան բերելու իրական արժանիքով նորահաս բանաստեղծ պատանիի մը՝ ներշնչումները»<sup>8</sup>,— այսպես է սկսվում Չյուկյուրյանի գրախոսությունը, որը ճշմարիտ վերլուծության օրինակ է: Այն աչքի է ընկնում նուրբ դիտողականությամբ, վերլուծական խորությամբ և սրամիտ ընդհանրացումներով: Գրախոսը Մեծարենցի ստեղծագործության առաջին և բնորոշ հատկանիշը համարում է բնության սերը. «Իրիկնամուտներու աշխատանքի գորողին մեջ առաջին բանը, որ կը նշմարվի բնության սերն է: Այդ սերը և զգացողությունը անոր շրթունքներուն՝ զինքը կը մղեն ճշմարտապես սիրուն գրական գյուտերու»<sup>9</sup>: Եվ իր միտքը հաստատելու համար նա վկայակոչում է նշանավոր «Միրերգ» բանաստեղծության հետևյալ տողը.

3 «Մասիս», 1906, № 15, էջ 228—229.

4 Նույն տեղում, էջ 229.

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում:

7 Նույն տեղում, էջ 230.

8 Նույն տեղում, 1907, № 27—28, էջ 581.

9 Նույն տեղում:

Համբույրներ կուգան հովեն ու ծովեն...

«Այս տողը կրնա սփոփիլ փափուկ բանաստեղծը,—գրել է Չյուկուրյանը:—Բընության նկարներում մասնակից կ'ըլլա նաև իր հոգին, որ թեև շունի խիստ խռովումներ, բայց ունի անորոշ քողածածուկ հուզումներ»<sup>10</sup>: Այդ «անորոշ, քողածածուկ հուզումներից» է նաև սիրո զգացումը, որը թեև տակավին խոր արմատներ չի ձգել բանաստեղծի հոգում, բայց դրսևորվել է որպես կարոտ ու երազ. «Հազիվ երբեմն կը հանդգնի երգելու բնության սերեն զատ, իր սերը»<sup>11</sup>,—ասել է Չյուկուրյանը և այդ կապակցությամբ հիշատակել «Ցայգանվազ» և «Շերամին նինջը» ոտանավորները, որոնք, նրա կարծիքով, ընթերցողին պատճառում են վայելք, էսթետիկական հաճույք իրենց բնապատկերներով ու շոշափելի նկարագրությամբ:

Հինգ աղբիկներ հուսկ օրըր պիտի երգեն վաղ գիշեր...

«Շերամին նինջը» բանաստեղծությունը հզորաբոլորող այս տողը մեջբերելուց հետո Չյուկուրյանը գրել է. «Այդ տեսակ օրորի մը բանաստեղծին հոգին ալ կը կարոտի, անցողակի վիշտերու հուսահատ պահերուն,

Երկու բոցե թևերուն մեջ ծովանդկարն է սխալի...»<sup>12</sup>:

Խոսելով «Այգերգ» բանաստեղծության մասին, քննադատը գտնում է, որ այն «գավառիկ պատկեր մըն է և բանաստեղծը վերջին ժայր բերրի միտք մը ցույց կուտա գավառիկ պատկերներու նկարումին մեջ»<sup>13</sup>:

Տեղին է նշել, որ Չյուկուրյանը ճիշտ է նկատել Մեծարենցի գյուղամեա հակումը և գյուղական կյանքի ու բնության պատկերների արտացոլումը «Միածանի»։ Շեշտելով, որ բանաստեղծը «գավառացի մըն է և անոր կատարյալ ավիշը ունի»<sup>14</sup>, նա ցույց է տալիս, որ Մեծարենցը իր բանաստեղծություններում հաճախ է անդրադառնում գյուղաշխարհին, ներշնչվում նոր հմայիչ պատկերներով։ Այդպիսին է ոչ միայն «Այգերգը», այլև «Աքասիաներուն շուքին տակը», որը նրա կարծիքով «ներդաշնակ բանաստեղծություն մըն է, իրապես զգացված»<sup>15</sup>:

Եվ այսպես, կոնկրետ բանաստեղծությունների հակիրճ վերլուծությամբ քննադատը բացահայտում է «Միածանի» հեղինակի ստեղծագործական անհատականության նրբերանգները, նրա հույզերի ու մտորումների նկարչազեղ պատկերացումները, որ փայլում են ինքնատիպությամբ։ Ճիշտ է Չյուկուրյանի նաև այն դիտարկումը, որ «կյանքի դառնությունները Մեծարենցին մղող են թրջալու լուակյաց խորհող մը»<sup>16</sup>, մի հանգամանք, որ դժբախտաբար հաշվի չի առնվել հետագա ուսումնասիրողների կողմից։ Նա հիշատակում է «Ցնորոտ անդորրություններ» բանաստեղծության այս տողը.

Այս գիշեր ջերմ ու երազված կայծեր հոգվույս խորերն ինկան...

«Երանի բանաստեղծին,—ասում է քննադատը,—մինչ Դուրյան այդ կայծերուն կը բաղձա և անոնց չգոյութենեն կը թռչնի, Միածանի հեղինակը հեշտորեն անոնցմով կ'օրորվի։ Բաղձանքներ, իղձեր ունի. ասոնք շատ չեն, բայց կը խռովեն զինքը թեթևակի»։ Այդ իղձերը, քննադատի ասելով, «ներշնչումի աղբյուրներ կը դառնան երիտասարդ զգայուն բանաստեղծին մեջ»։ Միանգամայն արդարացի նկատողություն, որ բխում է «Միածանի» բանաստեղծությունների համակողմանի ուսումնասիրությունից։ Չյուկուրյանը իրավացի է.

10 Նույն տեղում:

11 Նույն տեղում:

12 Նույն տեղում:

13 Նույն տեղում:

14 Նույն տեղում, էջ 583:

15 Նույն տեղում, էջ 581:

16 Նույն տեղում:

նաև, երբ նշում է, որ բանաստեղծի մոտ բաղձանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ «խտեական, հրեշտակային սիրտ մը կարողոր»։ Նույն այդ կարոտն է արտահայտված նաև «Եղծեր» բանաստեղծության մեջ, որ սիրակարոտ հոգու մի հուզիչ ղողանջ է։ Նշելով, որ Մեծարենցի «տաղերը արևոտ են, հակառակ ընդհանրապես վերջալույսներ ըլլալուն», Չյուկյուրյանը շեշտում է բանաստեղծի արևաբաղձ լինելը, որ ապացույց է բուռն կենսասիրության։ Ուստի պատահական չէ, որ «Միաժանի» բանաստեղծություններից գեղեցկագույնը նա համարում է «Արևին» քերթվածը, որով հեղինակը «կը հուսադրե թե ինք ճշմարիտ բանաստեղծ մըն է»<sup>17</sup>։ Այդ բանաստեղծությունը նա գնահատում է որպես կենսասեր ու սիրակարոտ հոգու «զորեղ արտահայտություն», ուր հեղինակը խանդաղատանքով սպասում է արևի «կիզանուտ համբուլըին»։ «Այդ քերթվածը,—դրել է Չյուկյուրյանը,—վսեմ աղոթք մըն է, տաղ մը, հեթանոսական ներբող մը, ատրուշանի սիրահար պահապան քուրմի մը մրմունջ»<sup>18</sup>։ Եվ անմիջապես մեջբերում է հետևյալ տողերը.

Պլլե զիս բոցեղեն ցանցերուդ մեջ  
 Լու օրորե ջերմագին...

«Արևի երգը,—շարունակում է քննադատը,—Մեծարենցինը չէ միայն, ամենուն, բոլոր արևակարոտ հոգիներուն է»<sup>19</sup>։ Սա նույնպես կարևոր միտք է, որով Չյուկյուրյանն ընդգծում էր այդ բանաստեղծության ընդհանրական իմաստը. դա ոչ թե սոսկ մի անհատի, այլ «բոլոր արևակարոտ հոգիների» պաղատանքն է՝ ուղղված կյանքի աղբյուր արևին։

Բացահայտելով «Միաժանի» արժանիքները, Չյուկյուրյանը միաժամանակ գրախոսության վերջում անդրադարձել է նրա որոշ թերություններին, որոնց մատնանշումը սակավ բացառությամբ հիմնավոր չէ և ժամանակին առաջ է բերել բանաստեղծի արդարացի դժգոհությունը։ Այսպես, Չյուկյուրյանի կարծիքով Մեծարենցը «ազդված է արդի բոլոր բանաստեղծներին... Ան ազդված է ոչ միայն Պարսամյանեն, Հարությունյանեն, Մալեզյանեն, այլ նույնիսկ Տ. Չրաքյանի ներաշխարհեն և ուրիշներն»<sup>20</sup>, Սա, իհարկե, մեղմ ասած՝ չափազանցություն է. Չյուկյուրյանը նկատի ունի այն, որ «Միաժանի» որոշ բանաստեղծությունների վերնագրերը («Վայրկյաններ», «Իրիկվան ձաններ», «Գետափի երազանք», «Բյուրեղի դյուխներ» և այլն) հիշեցնում են Արտ. Հարությունյանի մի քանի ոտանավորների վերնագրերը, և որ «Պարսամյանին երջանիկ բառերովը օծած է բանաստեղծը իր գործը»<sup>21</sup>։ Ըստ քննադատի այդ բառերն են՝ «անրջանք», «հրապուրանք», «տարփանք», «դյուխանք», «հաշիշ», «լազվարթ», «բիլ», «սատափ», «քրքրում» և այլն։ «Բայց երբե՞ն ի վեր բառերը սեփականություններ են կամ մենաշնորհ»<sup>22</sup>,—իրավամբ հարցնում է Մեծարենցը և ցույց տալիս, որ Պարսամյանն էլ Սիպիլեն փոխառած է իր հաճախակի գործածած բառերը։ Ինչ վերաբերում է Հարությունյանից փոխառած վերնագրերին, ապա դա ոչ մի կշիռ ու նշանակություն չունի, ուրվհետև, ինչպես նշում է դարձյալ Մեծարենցը, համաշխարհային գրականությանը հայտնի են «նույն մակագրությամբ անհամար գրություններ ու դիրքեր ալ»<sup>23</sup>։ Մեծարենցը մերժում է նաև «ներաշխարհի հեղինակներ» հղացումներ ընդօրինակած լինելը, մանավանդ որ դրա համար քննադատը ոչ մի ապացույց չի բերում։ «Հղացման ընդօրինակություն ըսելով Չյուկյուրյան հավանորեն ակնարկել կ'ուզե Կիբակմուտքը, որ ներաշխարհեն ամիսներ առաջ տպված էր արդեն Մալխիսի մեջ»<sup>24</sup>,—գրել է «Միա-

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում. էջ 581—582։

19 Նույն տեղում, էջ 582։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում։

22 Մ. Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1981, էջ 262։

23 Նույն տեղում։

24 Նույն տեղում, էջ 264։

ծանի» հեղինակը «Քննադատությունը» հոգվածում, որը գրված է Չոկյուրյանի գրախոսության և դրան կցված Ե. Արմենի ծանոթագրության առիթով:

Չոկյուրյանի ուշադրությունից չի վրիպել նաև Ինտրայի «Նոճաստան» գրքույկը (1908), որը ժամանակին աշխույժ հետաքրքրություն էր առաջացրել գրական շրջաններում, ստեղծելով տարակարծությունների ակտիվ մթնոլորտ: Դրան արձագանքեց նաև Չոկյուրյանը, «Սասուն» ամսաթերթում հանդես գալով ծավալուն մի գրախոսությամբ, որտեղ հանգամանորեն քննության է առնում Ինտրայի նոր գիրքը: Նրա կարծիքով «Նոճաստանի» ակներև թերություններից են «գաղափարի միօրինակությունը», իրարամերժ տարրերի առկայությունը: Դրանց պետք է ավելացնել նաև այն, որ Ինտրան «աններդաշնակ տողեր շատ ունի, երբեմն իմաստին պահանջը տրոհելու դաշնությունը խաթարած է»<sup>25</sup>:

Իր գրաքննադատական առաջին իսկ քայլերով Չոկյուրյանը, ինչպես տեսանք, դրսևորել է վերլուծական միտք, գրականագիտական դատողությունների հստակություն և խոսքի համոզչություն: Դրանք առավել ցայտունություն արտահայտվեցին մի փոքր հետո, երբ նա Մ. Շամսյանի հետ սկսեց հրատարակել «Ոստան» եռամսյա պարբերականը: Այստեղ, խմբագրական աշխատանքի բերումով, Չոկյուրյանը սխտեմատիկաբար արձագանքել է ընթացիկ գրական պրոցեսին, նոր լույս տեսած գրքերի մասին Մեհեկան ծածկանունով հրապարակել սեղմ, բայց բովանդակալից գրախոսություններ: Դրանք առօրյա քննադատության փայլուն նմուշներ են՝ գրված համոզմունքով ու բանիմաց գրչով: Հետաքրքրական է նշել, որ Չոկյուրյանը գրախոսական հոգվածներ է նվիրել դարասկզբին հրապարակ իշած արևմտահայ գրական նոր սերնդի աչքի ընկնող գրեթե բոլոր ներկայացուցիչներին: Մենք արդեն տեսանք նրա վերաբերմունքը Արտ. Հարությունյանի, Մ. Մեծարենցի և Ինտրայի նկատմամբ: Դրանց պետք է ավելացնել նաև Երուխանի, Ռ. Սևակի, Մ. Պերպերյանի, Ս. Պարթևյանի, Զ. Նսայանի, Թեոդիկի և այլոց անունները, որոնց մասին առաջին խոսք ասող քննադատներից էր Չոկյուրյանը: Նույն այս շրջանում է, որ նա արտահայտվել է Շիրվանզադեի, Զոհրապի, Իսահակյանի, Սիամանթոյի և Վարուժանի մասին, նրանց վաստակը գնահատելով որպես հայ գեղարվեստական մշակույթի բարձրագույն նվաճումներ: Ինչպես կարելի է նկատել, Չոկյուրյանին հավասարապես հետաքրքրել են թե՛ բանաստեղծը և թե՛ արձակագիրը, որոնց երկերի կոնկրետ վերլուծությամբ ձգտել է գնահատել տվյալ հեղինակին: Ըստ որում նրան խորթ էին պատեհապաշտությունն ու սուբյեկտիվ նկատառումները, ինչպես և անհիմն դրվատանքն ու պարսավանքը: Նրա ուշադրության կենտրոնում միշտ եղել է գրական երկը, որի մեջ էր խորանում քննադատը, նըպատակ ունենալով բացահայտելու նրա արժանիքներն ու թերությունները: Մեր վեպերի գործը, — գրել է Չոկյուրյանը, — պիտի դատվի ինքն իր մեջ...»<sup>26</sup>: Այդ գիտակցությամբ էլ նա ձգտում էր խորամուկ լինել տվյալ ստեղծագործության գաղտնածածուկ խորշերը և վեր հանել հեղինակի ստեղծագործական անհատականության բնորոշ գծերը: Հետաքրքրական է, որ Չոկյուրյանի քննարկած երկերը աչքի են ընկնում ոչ միայն ժանրային բազմազանությամբ (բանաստեղծություն, արձակ, թատերգություն), այլև գրական տարբեր ուղղություններով (ռոմանտիզմ, ռեալիզմ, սիմվոլիզմ և այլն): Բոլոր դեպքերում՝ սակայն, նա նախապատվությունը տալիս էր ռեալիզմին, որի մեջ տեսնում էր կենսական երևույթները պատկերելու առավել ճշգրիտ ու բեղմնավոր ուղի: Հենց դրանով է բացատրվում այն դրական ու ջերմ վերաբերմունքը, որ Չոկյուրյանը ցուցաբերել է Զոհրապի, Երուխանի և ռեալիստ այլ հեղինակների գործերի նկատմամբ:

Այսպես, գրախոսելով Երուխանի «Կյանքին մեջ» խորագրով նորավեպերի ժողովածուն (1911 թ.), Չոկյուրյանը իրավամբ բարձր է գնահատում

<sup>25</sup> «Սասուն», 1909, № 2, էջ 74:

<sup>26</sup> «Գրական ասուլիսներ, Ա., Շանթի «Հին ասուլիսներ», Կ. Պոլիս, 1913, էջ 17:

հեղինակի ստեղծագործական ընդունակությունը, որ դրսևորվել է հոգեբանական վերլուծումների ու պատմողական արվեստի մեջ: «Իհարկոք մը, հոգեբան մը, ու հրապուրիչ պատմող մը կա այդ գրողին մեջ...»<sup>27</sup>, — գրել է Չյուկուրյանը և դա հիմնավորել կոնկրետ երկերի վերլուծությամբ: Երուխանի մի այլ, ոչ պակաս կարևոր արժանիքը քննադատը համարում էր այն, որ նա խորանում է խոնարհ խավերի կյանքի մեջ. «...որքան խոնարհ դասերու մեջ կիջնե ինք, այնքան թանկագին կը դառնան իր վերլուծումները...»<sup>28</sup>: Եվ դա միանգամայն ճիշտ դիտողություն է, որ բխում է Երուխանի նորավեպերի ուսումնասիրությունից: Խորանալով այդ գործերի մեջ՝ Չյուկուրյանը կարողացել է որսալ հեղինակի գաղափարական միտումը, որն արտահայտվել է հասարակ մարդկանց կյանքի ու հոգեբանության պատկերմամբ: Այդ կապակցությամբ նա հիշատակում է «Եվնիկե», «Քարտեղճին», «Զկնորսին սերը» և ուրիշ երկեր, որոնք ըստ քննադատի «գեղեցկագույն են» և որոնց նմանը դժվար է գտնել «պոլսահայ կյանքը նկարող գրականության մեջ»: Նկատի ունենալով գրանցում պատկերված հոգեկան ապրումների և մանավանդ սիրո զգացմունքի նրբերանգների ճշմարտացիությունը՝ Չյուկուրյանը գրել է. «Ճշմարիտ սիրո ողբերգություններ կամ տռամներ են ասոնք, որոնք իրենց արտահայտումի բնականություններով խիստ հետաքրքրական են»<sup>29</sup>:

Գնահատելով ու արժեքավորելով Երուխանի նորավեպերը՝ քննադատը չի սահմանափակվել միայն գրվածքներով, այլ արել է թուուրքի դիտողություններ, որոնք վերաբերում են առանձին գործերի: Այսպես, նրա կարծիքով «անիրական է մի քիչ Վաբձու տունը», «քիչ մը անհամ ու վարդապետական Կադանդլիք»<sup>30</sup> և այլն: Ճիշտ է, այս դեպքում նա բավարարվում է սոսկ հայտարարությամբ, իր խոսքը չի հիմնավորում, բայց և այնպես նրա դիտողություններն արժանի են ուշադրության:

Չյուկուրյանը գրախոսություն է հրապարակել նաև Գ. Զոհրապի «Կյանքն ինչպես որ է» ժողովածուի մասին: Բնորոշ է, որ սկզբից ևեթ նա հեղինակին անվանում է «տաղանդավոր գրագետ», որն իր միտքը անպատճառ կը դարձնե մարդկային տխուր կյանքերու վերլուծումին<sup>31</sup>: Այս ասելով քննադատը նկատի ունի նշված ժողովածուի մեջ ամփոփված նորավեպերի հիմքում ընկած անցքերի տխրաշնչալի բնույթը: Ըստ որում, ինչպես նշում էր Չյուկուրյանը, դրանց նյութը թեև պարզ է, բայց այն խորանում ու հարստանում է հեղինակի «մտածումներով, ուժգին դիտողություններով ու վերլուծական կորովով»<sup>32</sup>: Այդպիսիք են «Ճիտին պարտքը», «Ժամին բակը», «Հակոբիկը» նորավեպերը, որոնք իսկապես տոգորված են հեղինակային մըտածումներով, դիտողություններով ու հոգեբանական վերլուծումներով: Դրանց մեջ անհամեմատ ավելի զգալի է հեղինակի ներկայությունը, որն իր հարցադրումներով ու միջամտությամբ սրություն է հաղորդում շարադրանքին:

Ճիշտ է նկատել Չյուկուրյանը, որ Զոհրապի նշված ժողովածուի առաջատար մոտիվներից է ռեքը: «...հատորը լեցնողը սիրո փառաբանությունն է», — ասում է նա և շեշտում, որ այդ զգացումը նրա մոտ դրսևորվել է ամենատարբեր նրբերանգներով: Բայց անշուշտ շափազանցություն է ասել, թե «Զոհրապի սերերը իրենց խորքին մեջ անձնական դրոշմ կը կրեն...»: Այդպես մտածել, կնշանակի անգիտանալ գրողի ստեղծագործական հնարանքի էությունը, որը բովանդակում է հասարակական իմաստ: Եվ եթե նրա մոտ հանդիպում ենք սիրո ամենատարբեր հոգեվիճակներ պատկերող գործերի, ա-

27 «Ոստան», 1911, № 2, էջ 445:

28 Նույն տեղում:

29 Նույն տեղում:

30 Նույն տեղում:

31 Նույն տեղում, էջ 446:

32 Նույն տեղում:

պա դա վկայում է հեղինակի հարուստ կենսաճանաչողության և խոր հոգեթափանցության մասին:

Իրավացի է Զյուլկուրյանը, երբ գտնում է, որ Զոհրապի պատկերած «կինները իրենց հոգեկան ախտավորության մեջ իսկ, միշտ շնորհալի, միշտ մաքմնագեղ, միշտ հրաշալի էակներ են, ըլլան գավառացի կամ ոստանիկ, հայ էամ օտար»<sup>33</sup>: Դրանում համոզվելու համար նա խորհուրդ է տալիս վերստին կարդալ այս շարքի «Երջանիկ մահը», «Ալինկա», «Դիմակը», «Ճուկո», «Երթուրլըն», «Վերադարձը», «Արմենիսա», «Կսրթեկի թե» նորավեպերը, որոնցում կարելի է հանդիպել, իր խոսքերով ասած՝ «կիններու գրեթե միևնույն գեղեցիկ տիպարներուն»: Հիրավի, Զոհրապի մոտ հավասարապես գեղեցիկ են թե՛ սպասուհին և թե՛ տիրուհին, թե՛ գյուղից եկած հասարակ աղջիկը և թե՛ քաղքենուհին: Զյուլկուրյանը դա բացատրում է նրանով, որ «հեղինակին աչքը շուրջ կինը իջեցնել դասական և վիպականության բարձրունքին»<sup>34</sup>: Դա, իհարկե, հիմնավոր բացատրություն չէ, բանն այն է, որ տվյալ հասարակության մեջ կնոջ ինքնապաշտպանության միակ ղեկը գեղեցկությունն է, որի կորուստը իրավացիորեն մեծ դժբախտություն է համարում «Երջանիկ մահը» նորավեպի հերոսուհին: Վերջինիս կարծիքով հրապույրները կորցրած կինը նման է ձայնը մարած երգչի, որ պետք է թողնի լեմբ: Այդ առավել ևս այն պատճառով, որ այդ իրականության մեջ ամեն ինչ, հետևաբար և կինը վեր է ածվել փոխանակային արժեքի, ուրեմն և առաջին պլանի վրա է մղվում նրա արտաքին հմայքը: Ոչ ոքի չի մտահոգում հոգեկան, մտավոր գեղեցկությունը, բայց ամենքն էլ տկար են արտաքին փայլի ու հրապույրի հանդեպ:

Արդարացի է Զյուլկուրյանի նաև այն դիտողությունը, որ «նկարագրություններու մեջ ժուժկալ է Զոհրապը, բայց հոն, ուր միջամուխ կ'ըլլա անոր մեջ իր վրձինը կորույթի, պատկերալից ու խիտ կը դառնա»<sup>35</sup>: Այդ առնչության մեջ նա վկայակոչում է «Ժամին բակը» և մանավանդ «Վերադարձ» նովելներում նկարագրված «բնության պատկերները», որոնք «վարպետի վերածինով հորինված շրջանակներ են» և ուժեղացնում են հուզական շեշտն ու էսթետիկական ներգործությունը: Զյուլկուրյանի համոզմամբ ժողովածուի ղեկավարուն կտորները կը կազմեն «Ճիտին պարտքը», «Վերադարձը», «Ժամին բակը», «Արմենիսան» և մանավանդ «Ալինկան», որը նա համարում է «սքանչելի պատմվածք»: Բայց ահա առանձին գործերի կապակցությամբ քննադատը նշում է թույլ ու թերի կողմեր, որոնք արժանի են ուշադրության: Այսպես, օրինակ, նա գրում է. «Դիմակը քիչ մը անորոշ իր վերջավորության մեջ, Երջանիկ մահը ու անոր հերոսուհին բացառիկ տիպար մը, որ կրնա իր համակիրները ունենալ, բայց հաղվադեպ են ատանկ հոգիներ ու ավելի երևակայության ստեղծագործություն»<sup>36</sup>: Ակնհայտ է, որ քննադատին դուր չի եկել առաջին նորավեպի վերջավորությունն իր անորոշությամբ, իսկ երկրորդի հերոսուհուն համարում է «բացառիկ տիպար մը», որպիսի հոգիներ հազվադեպ են պատահում: Համաձայնվենք թե չհամաձայնվենք այս դիտողությանը, միևնույն է, դա ցույց է տալիս Զյուլկուրյանի հավատարմությունն իրապաշտական մեթոդին, որը բխում է նրա գրականագիտական դավանանքից:

Սխալվում է քննադատը, կարծելով, թե «Զոհրապը հոռետես մըն է, հաճախ ամենին նվիրական զգացումներուն տակ խաբկանքն ու սուտը պահված կը տեսնեն»: Թե ինչ նկատի ունենա, դժվար է ասել, բայց որ Զոհրապը այդպիսին չէ մանավանդ սույն ժողովածուում, դա կասկածից վեր է: Ըստ երևույթին քննադատին շփոթեցրել է առանձին երկերում ծավալվող անցքերի մոայլ շեշտը, որ պայմանավորված էր նկարագրվող կյանքի, սուլ-

33 Նույն տեղում:

34 Նույն տեղում:

35 Նույն տեղում, էջ 447:

36 Նույն տեղում:

Թոնական դաժան իրականության հանգամանքներով: Ձոհրապը ոչ թե հոռետես է, այլ կենսասեր, որը ղեկավարվում է «կյանքն ինչպես որ է» նշանաբանով, ուստի և հեռու այդ կյանքը գունազարդելուց:

Չյոկյուրյանն անդրադարձել է նաև Ս. Պարթևյանի, Չ. Ծսայանի և դարասկզբի այլ հեղինակների գործերին, որոնց սեղմ ու դիպուկ գնահատման ընթացքում արտահայտել է հետաքրքիր մտքեր, արել սուր դիտողություններ, որոնք ցույց են տալիս նրա գրական ճաշակն ու նրբանկատությունը:

Հենց այս շրջանում էր, որ Չյոկյուրյանը գրեց իր ամենից ընդարձակ գրական-քննադատական ուսումնասիրությունը՝ «Շիրվանզադեի գրական գործը» խորագրով: Այն արձագանք էր ականավոր գրողի գրական գործունեության 30-ամյա հոբելյանի, որը մեծ շուքով նշվեց 1911 թվականին: Չյոկյուրյանը միանգամայն տեղին էր համարում այդ հոբելյանը, որն «արժանի վարձք» է «անխոնջ գրողին, որուն գրական գործը ընդարձակ, խոր, տոկուն՝ անտարակույս պիտի մնա տասնիններորդ դարու ու սա քսաներորդի սկզբին, գեղեցիկ գրական ժառանգներին մին, ապագայի մեր գրականության»<sup>37</sup>: «Մեր» ասելով նա նկատի ուներ հայ գրականությունն ընդհանրապես, առանց միմյանցից անջատելու նրա երկու ճյուղերը: Սա շատ կարևոր միտք է, որով Չյոկյուրյանը մեր գրականությունը դիտում էր որպես մի միասնական գրականություն՝ «իր տիպարներով, զգացումներով, ձգտումներով, ցեղային հատկանիշներով»: Այդ գիտակցությամբ էլ նա հարց է դնում որ «ոռուսահայր և թրքահայր փոխադարձորեն ճանշան իրենց լավագույն դավակները, ու գիտնան զանոնք գնահատել միասին»: Այդպիսի զավակներից էր Շիրվանզադեն, որի գործը որպես ազգային մշակույթի ցայտուն արտահայտություն, հարազատ է «հանուր հայության համար»: Հենց այդ պատճառով, ինչպես Չյոկյուրյանն էր նշում՝ Շիրվանզադեն «որևէ հայ հատվածի պատկանելի առաջ հայ ժողովրդին է գերազանցապես, ու անոր համար սարքված հոբելյանն ալ համազգային հանգամանք պետք է ստանար, և ըստացավ»<sup>38</sup>: Առավել հետաքրքրական է Չյոկյուրյանի այն հայեցակետը, որ արևելահայ ու արևմտահայ մտավորականության փոխադարձ ծանոթացումը և նրանց գործերի ուսումնասիրությունը հնարավորություն կտա մոտիկից ճանաչելու մեր գրականության երկու հատվածների առավել ու թերի կողմերը և ըստ այդմ կողմնորոշվելու դեպի դրականը. «Թրքահայր պետք ունի արևելյան հայ գրականության կենսունակ, խիտ ու խորքով գործերուն, բարձրանալու համար իր միամիտ մակերեսայնությունն, ընդգրկելու իրոնց համար տակավին փակ ու անծանոթ գրական սեռեր ու միտքեր: Իսկ ոռուսահայ մտավորականությունը պետք է թափանցե թրքահայ գրականության մեջ, քաղելու անկե լեզվական ճկունությունը, ներդաշնակությունը, գեղարվեստական բավական ամուր բարձրությունը, վերջապես մեր աշխարհաբարին բավարար կատարելությունը»<sup>39</sup>: Որքան էլ չափազանցված ու կրտուրով լինի քննադատի այս պնդումը, մի բան անառարկելի է. այդ այն է, որ մեր երկճյուղ գրականությունը բնորոշ են առանձնահատուկ գծեր, որոնց ուսումնասիրությունը կնպաստի գրողների ստեղծագործական վարպետության բարձրացմանը:

Անդրադառնալով Շիրվանզադեի ստեղծագործական անհատականությանը՝ Չյոկյուրյանը նախ և առաջ բարձր է գնահատում նրա ինքնակրթության եռանդը, որի համար գրողին անվանում է «ինքնազարգացումի հերոս մը»: Դրա հետ միասին նա նշում է, որ Շիրվանզադեն իր գրական գործունեությունը սկսել է վաղ հասակից և կարճ ժամանակամիջոցում դարձել մեր գրականության այն հազվագյուտ դեմքերից, որոնք գրականությունը դարձրին առվեստ, ապրեցին «գրողի արվեստով» և ըմբռնեցին իրենց կոշտ ու դժուր հասարակական կյանքում:

37 Նույն տեղում, 1911, № 3, էջ 477:

38 Նույն տեղում, էջ 478:

39 Նույն տեղում:

Շիրվանզադեի ստեղծագործության թեմատիկ ու ժանրային բազմազանության մասին խոսելիս Չյուկյուրյանը գրել է. «Շիրվանզադեի գրական գործը ամբողջություն մըն է գրեթե. ուսահայ և կովկասահայ կյանքին համադրությունը, արտահայտված նրբախղճորեն զորավոր, զգայական արվեստով մը, նորավեպերու, վիպակներու, վեպերու և թատերգությունաց մեջ»: Չյուկյուրյանը միաժամանակ հարկ է համարել ընդգծելու, որ նրա «գործերուն մեջ կ'երևվան հավասարապես մտավորականը, իր բոլոր վարիանտներով, կղերը, գործակատարը, վաճառականը, ուսանողը, հայ կինը զարգացումի ճամբուն վրա, հայ կինը տգետ, նախապաշարված, հայ գործիչը, հայ պաշտոնատարը, ու հոս հոն նաև գործավորը, հայ աշխատավորը, արհեստավորը...»<sup>40</sup>: Ավելին, Չյուկյուրյանի կարծիքով «...մեր մեջ տակավին ոչ մեկ գրող, վիպագիր կամ թատերագետ բարբերու, զգացումներու, հոգեկան թաքուն էությունց, խորհուրդներու, սիրո ալլազանության և խորության մասին այնքան ընդարձակ ու խորահայաց եղած է, որքան Շիրվանզադե»: Եվ այդ ամենը Շիրվանզադեի գրչի տակ պատկերված են կենդանի, ռեալիստական համոզությամբ, որը և նրա ստեղծագործական նկարագրի բնորոշ գիծն է. «Որքան առարկայական իր տիպարներուն ու ներկայացուցած կյանքին մեջ, նույնքան ալ իրապաշտ մըն է ինք: ուսահայ գրականության առաջին իրապաշտը...»<sup>41</sup>: Որքան արդարացի է Չյուկյուրյանն այս նախադասության առաջին մասում, նույնքան սխալվում է վերջնամասում՝ Շիրվանզադեին համարելով արևելահայ գրականության «առաջին իրապաշտը»: Այդպես մտածել՝ կնշանակի անգիտանալ նրա նախորդ հեղինակների թողած ռեալիզմի հարուստ ավանդույթները, որոնց ստեղծագործական փորձի յուրացման ճանապարհով աճեց ու հասունացավ Շիրվանզադեն, հարբստացնելով և ընդլայնելով ռեալիստական մեթոդի բովանդակությունը: Կինելով «դգայուն, դիտող, վերլուծող հոգի» և «կորովի տաղանդ», ինչպես ասել է Չյուկյուրյանը, Շիրվանզադեն առաջ մղեց հայ արձակն ու դրամատուրգիան՝ տալով բարձրարժեք պատմվածքներ, վիպակներ, վեպեր, դրամաներ... Այն էլ հետաքրքրական է, որ քննադատը հեղինակի փոքրածավալ գործերից առանձնապես բարձր էր գնահատում «Արտիստը», համարելով այն «զմալիլի, սրտառու, եղերական» էջ, որը «Քառսին» և «Ցավագարին» հեղինակին գլուխ-գործոցը կը կազմեն»<sup>42</sup>:

## ТИГРАН ЧЕКЮРЯН—ЛИТЕРАТУРНЫЙ КРИТИК

ГРИГОР САРКИСЯН

### Резюме

Тигран Чёкюрян (1884—1915) является одним из видных представителей западноармянской литературы начала века. Т. Чёкюрян свою литературную деятельность начал критическими статьями, нашедшими горячий отклик у современников. При этом его в равной степени интересовали и поэты, и прозаики.

Рассматриваемые статьи Чёкюряна, посвященные анализу творчества Арт. Арутюняна, М. Мецаренца, а также Ерухана, Г. Зограба и А. Ширванзаде, раскрывают литературоведческие взгляды Чёкюряна, в основе которых лежали принципы реализма и народности.

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 479:

<sup>41</sup> Նույն տեղում:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 487: